ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Վ.ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ
«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԸ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ»
ՆՈՅԵՄԲԵՐ 27-28, 2023 թ., ք. ԵՐԵՎԱՆ

Հարգելի գործընկերներ,

Սիրով հրավիրում ենք մասնակցելու **«Մանկավարժական խոսույթը միջմշակութային հաղորդակցության համատեքստում»** խորագրով միջազգային գիտաժողովին:

Գիտաժողովի նպատակն է՝ խթանել մասնագիտական փորձի փոխանակումը, մանկավարժական գիտության և դասավանդման մեթոդիկաների զարգացումը:

Գիտաժողովի խնդիրներն են՝ քննարկել մանկավարժության արդի հիմնախնդիրները, լուսաբանել մանկավարժության և դասավանդման մեթոդիկաների զարգացման միտումներն ու հեռանկարները:

Գիտաժողովի անցկացման վայրը՝ Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան, Երևան, Թումանյան 42:

Գիտաժողովի անցկացման ժամկետը՝ նոյեմբերի 27-28, 2023 թ.:

Գիտաժողովի հիմնական ուղղությունները՝

- Մանկավարժական կրթության զարգացման միտումներն այսօր և վաղը
- Մանկավարժական նորարարական սկզբունքները, մոտեցումները և տեխնոլոգիաները
- Տեղեկատվական տեխնոլոգիաները կրթության ոլորտում
- Ուսուցման կազմակերպման նորարարական մոտեցումները և տեխնոլոգիաները
- Լեզու-մշակույթ կապը դասավանդման գործընթացում
- Մանկավարժական խոսույթների փոխներթափանցման հաղթահարման ուղիները
- Մանկավարժական հաղորդակցման խոսութային ռազմավարությունները:

Գիտաժողովի աշխատանքային լեզուները՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն:

Գիտաժողովի մասնակցության ձևերը՝ առկա և առցանց:

Գիտաժողովին մասնակցելու համար անհրաժեշտ է aarnaudyan@yahoo.com էլեկտրոնային հասցեին ուղարկել.

- գրանցման հայտը՝ մինչև 10.10.2023
- հոդվածը՝ մինչև 10.10.2023:

Հոդվածին ներկայացվող պահանջները

- Հոդվածը պետք է ներկայացվի doc ձևաչափով:
- Հոդվածի ծավալը՝ ոչ պակաս, քան 0.5 և ոչ ավել, քան 1,0 մամուլ, նվազագույնը՝ 8, առավելագույնը 16 էջ:
- Էջի չափերը՝ 16x23.5:

- Էջի լուսանցքները՝ վերև 2սմ, ներքև՝ 2,5սմ, ձախ՝ 2սմ, աջ՝ 2սմ /առանց ոճական ձևավորումների/:
- Պարբերության սկիզբը՝ 1սմ լուսանքից աջ:
- Տառատեսակը՝ GHEA Grapalat, տառաչափը՝ 10, միջտողային տարածությունը՝ 1,0:
- Բոլոր էջերը պետք է համարակալված լինեն:
- Տեքստում չպետք է լինեն կրկնակի բացատներ և տողադարձեր:
- Աղյուսակները ներկայացվում են Word ձևաչափով:
- Բոլոր նկարները պետք է լինեն հստակ՝ 300dpi tif կամ jpg ձևաչափով:

Գիտաժողովի նյութերը տպագրվելու են Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի **ԲԱՆԲԵՐ** գիտական պարբերականում: Ներկայացված պահանջները չբավարարելու դեպքում հոդվածը չի կարող ընդգրկվել հրապարակվող ժողովածուում:

Հոդվածի ձևավորումը

Հոդվածի անվանումը (12 տառաչափ)
Հեղինակի ԱԱՀ (12 տառաչափ)
Բուհը (12 տառաչափ)
Քաղաք, երկիր (12 տառաչափ)

Ամփոփում: Ոչ ծավալուն շարադրանք՝ 250-300 բառ: Ամփոփման մեջ նշվում է հոդվածի գլխավոր թեման և ներկայացվում աշխատանքի ընդհանուր բնութագիրը:

Ծանոթագրություն. Հայերեն հոդվածի ամփոփումը պետք է լինի ռուսերեն և անգլերեն, ռուսերեն հոդվածի ամփոփումը՝ հայերեն և անգլերեն, իսկ անգլերեն հոդվածի ամփոփումը՝ հայերեն և ռուսերեն, 200 բառից ոչ ավել (12 տառաչափ):

Բանալի բառեր՝ 12 տառաչափ, ոչ ավել քան 10 բառ և բառակապակցություն՝ իրարից ստորակետով անջատված:

Հաջորդիվ գրվում է հոդվածի հիմնական տեքստը (10 տառաչափ):

Գրականության ցանկը ձևավորվում է այբբենական կարգով (10 տառաչափ):

Հոդվածները կարող են ներկայացվել հայերեն, ռուսերեն, անգլերեն:

Լրացուցիչ տեղեկատվության համար կարող եք դիմել Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան, Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոն:

Կոնտակտային տվյալներ՝

ԲՊՀ, Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոն
Հասցե՝ ք. Երևան, Թումանյան փ. 42
Հեռ.՝ (+374 60) 830 121
Էլ. հասցե՝ info@bryusov.am

Գիտաժողովի կազմակերպական խումբ՝

Միլիտոսյան Լուիզա
Կարապետյան Իզոր
Պետրոսյան Հայկ
Տատկալո Նինա
Մինասյան Աննա
Ասատրյան Սուսաննա
Միսկարյան Մարինա
Արնաուդյան Անահիտ

Հարգանքով՝
Գիտաժողովի կազմակերպական խումբ

Մասնակցության հայտ
Վ.ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ
«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԸ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ»
ՆՈՅԵՄԲԵՐ 27-28, 2023 թ., ք. ԵՐԵՎԱՆ

Անուն, ազգանուն	
Բնակության վայրը (երկիրը, բնակավայրը)	
Աշխատանքի վայրը (նշել անվանումն ամբողջությամբ, հասցեն, հեռախոսը, էլ. հասցեն)	
Հեռախոս	
Էլեկտրոնային հասցե	
Զեկուցման թեմա	